

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
«Հայոց ցեղասպանությունը և
հատուցման հիմնախնդիրը»
22-23 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2016 թ.

ԶԵՎՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ
«Геноцид армян и проблема возмещения»
22-23 ноября 2016 г.

СБОРНИК ДОКЛАДОВ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

INTERNATIONAL CONFERENCE
«The Armenian Genocide and
the Problem of Reparation»
22-23 November 2016

COLLECTION OF PAPERS

ԵՐԵՎԱՆ – 2017

ՀՏԴ 94(479.25):06

ԳՄԴ 63.3(5Հ)

Հ 282

**ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ**

Խմբագիր՝ Ա. Մարուքյան

Հայոց ցեղասպանությունը և հատուցման հիմնախնդիրը:

Հ 282 Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու. – Եր.:

ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2017. – 256 էջ:

Ժողովածուում ընդգրկված են 2016 թ. նոյեմբերի 22–23-ին ՀՀ ԳԱԱ-ում կայացած «Հայոց ցեղասպանությունը և հատուցման հիմնախնդիրը» միջազգային գիտաժողովի նյութերը:

Նախատեսված է Հայոց ցեղասպանության պատմության ու Հայոց պահանջատիրության հարցերով հետաքրքրվող ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 94(479.25):06

ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-860-50-3

© ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017

ԲԱՂԵՇԻ ՆԱՀԱՆԳԻ ՍՊԱՐԿԵՐՏ ԳԱՎԱՌԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵՒՆ

Ինչպես հայտնի է, 1914-1917 թթ. ինչպես հայկական մի շարք կազմակերպությունների, այնպես էլ անհատների կողմից Արևելյան Հայաստանի տարածքում և ռազմական գործողությունների ընթացքում ռուսական բանակի կողմից ռազմակալված Հյուսիսային Պարսկաստանի՝ գերազանցապես հայաբնակ Սալմաստի և Ուրմիայի գավառներում պարբերաբար անց են կացվել արևմտահայ գաղթականների հաշվառումներ: Դրանց տվյալները, այն էլ ընդհանուր ցուցանիշներով, միայն մասամբ են հրատարակվել: Այս տեսանկյունից թերևս առավել մանրամասն կարելի է համարել Երևանի նահանգում 1915 թ. հունվարի 30-ին տեղ գտած միօրյա վիճակագրությունը¹: Սակայն առ այսօր դեռևս անտիպ են մնում նմանատիպ մի քանի այլ տեղեկագրեր: Այս տեսանկյունից ուշագրավ և, կարելի է ասել, բացառիկ են Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) պահվող 2 նմանատիպ տեղեկագրեր: Առաջինը 1916 թ. օգոստոսին (մի քանի գյուղերի նյութերը՝ սեպտեմբերի առաջին օրերին) կազմել է հայտնի հասարակական գործիչ, ՀՅԴ անդամ Շիրինը (Շիրին Հակոբյան) Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ): Շիրինն անհատական հարցման ճանապարհով գավառակենտրոն Նոր Բայազետ քաղաքում և այն գյուղերում, որտեղ ապաստանել էին արևմտահայ փախստականները, գրանցել է ականատեսների վկայությունները հայության կոտորածների ընթացքի մասին գերազանցապես Վանի և Բաղեշի, մասամբ՝ Էրզրումի նահանգների այլևայլ գավառներում 1915 թ.

¹ Տե՛ս «Эриванская статистическая комиссия. Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией (армян, айсоров, греков и пр.) 1914-1915 гг.», Эривань, 1915.

տեղ գտած իրադարձությունների վերաբերյալ, ինչպես նաև՝ հավաքել արժեքավոր տեղեկություններ, որոնք պարզում են հայ բնակչության թե՛ մարդկային և թե՛ նյութական կորուստները¹: Ընդհանուր առմամբ Շիրինին հաջողվել է հաշվառել 130 բնակավայրերից դուրս եկած ավելի քան 950 տուն (ընտանիք)²: Երկրորդի նյութերը վերաբերում են 1917 թ. փետրվար-մարտ ամիսներին Սալմաստի գյուղերում կատարված հաշվառմանը, որոնք 1918 թ. հոկտեմբերին Թիֆլիսի Ազգային խորհրդին էր փոխանցվել Պետրոգրադի հայ գաղթականներին օգնող խմբի կողմից, իսկ տարիներ անց՝ ի պահ տրվել ՀԱԱ-ում³: Հաշվառման տվյալները գրանցված են իրար ամրացված մեծադիր թերթերին, ընդ որում մասամբ սևագիր են (որպես կանոն՝ գրանցված մատիտով, որտեղից էլ՝ հանդիպող կրկնությունները): Որոշ թերթերի պահպանված գրառումներից պարզվում է, որ նշված հաշվառման համար նախատեսված հատուկ հարցացուցակը կազմվել է հասարակական գործիչ Հակոբ Տեր-Հակոբյանի (Իրազեկ) կողմից⁴: Հանդիպում են հետևյալ հարցերը. 1) որտեղ է անցկացվել հաշվառումը⁵, 2) ո՞ր գավառներից և բնակավայրերից են դուրս եկել գաղթական ընտանիքները (տները), 3) բնակիչների թիվը մինչև կոտորածն ու գաղթը (1915 թ.) և հաշվառման պահին (1917 թ.), 4) կորուստները (սպանվածներ և անհետ կորածներ, մահացածներ, թուրքական բանակ զորակոչվածներ, որոնց ճակատագիրն անհայտ էր), 5) գրագիտության մակարդակը, 6) տնտեսական դրությունը 1915 և 1917 թթ., 7) տարեկան եկամուտը հաշվառման պահին: Յուրաքանչյուր թերթին գրանցված է հաշվառումն անցկացնող անձի անունը («վիճակագրող»): Կրկին անհատական հարցման ճանապարհով հավաքվել են նախկին Վանի և Բիթլիսի նահանգների 150-ից

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 430:

² Դրանցից 81-ը բաժին են ընկնում Վանի, 45-ը՝ Բաղեշի և միայն 5-ը՝ Էրզրումի նահանգներին: Նույն տեղում, թ. 56-59 (ամփոփիչ հանրագումարային ցուցակ):

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 111:

⁴ Նույն տեղում, թերթ 33-36, 39, 42, 61-66 նւ:

⁵ Նշված են Սալմաստի գավառի հիմնականում հայաբնակ հետևյալ 11 գյուղերը՝ Փայաջուկ, Ղալասար, Մահլամ, Ղզըլա, Հինքաղաք-Սալմաստ, Սավրա, Հաֆթվան, Մարամեղիկ, Զևաջուկ, Ուլա և Սառնա:

ավելի բնակավայրերից¹ Սալմաստում ապաստանած շուրջ 2000 հայ տների (գերդաստանների) վերաբերյալ հազվագյուտ վիճակագրական տեղեկություններ, որոնք աչքի են ընկնում բավական բարձր հավաստիությամբ: Հարկ է նշել, որ վերոհիշյալ վիճակագրությունների քննությունը շատ հաճախ հնարավորություն է ընձեռում ճշտելու վերոհիշյալ վարչամիավորների ինչպես մեծաթիվ բնակավայրերի, այնպես էլ առանձին գավառների հայ բնակչության՝ Մեծ եղեռնի նախօրեին ձևավորված վիճակագրական կացությունը: Նման գավառներից կառանձնացնեինք Աղբակը, Գյավառը, Կարկառը՝ իր 2 ստորաբաժանումներով (Վերին և Ներքին կամ Վարի), Մահմուդի-Սարայը, Մամոտանքը, Մոկսը, Ջուլամերիկը, Սպարկերտը ևն:

Ներկա հոդվածում ընթերցողի ուշադրության ենք ներկայացնում մեր ուսումնասիրությունը նշված վարչամիավորներից Սպարկերտի մասին, քանի որ վերջինիս մեզ հասու տվյալներն առավել ամբողջականներից են: Այս հանգամանքը թույլ է տալիս ճշգրտելու Սպարկերտի հայ բնակչության գրեթե ամբողջական վիճակագրական պատկերը 1914-1915 թթ.: XIV դարի 2-րդ կեսից հայերեն ձեռագրերի հիշատակարաններում հիշատակվող Սպարկերտը² գտնվում էր Հայկական Տավ-

¹ Հիմնական մասը դարձյալ կազմում են Վանի նահանգի բնակավայրերը (89): Բաղեռք, գրեթե առանց բացառության, ներկայացված է Խիզանի գավառի (թրք.՝ kaza) 60 գյուղերից դուրս եկած բնակչությամբ: Գրանցված են նաև առանձին տներ (գերդաստաններ) ինչպես Բաղեռքի այլևայլ գավառներից, այնպես էլ Վան և Սղերդ քաղաքներից: Զմոռանանք նշել, որ վերոհիշյալ բնակավայրերում հաշվառվել են նաև 1914 թ. վերջերին թուրքական բանակի ներխուժման հետևանքով Երևանի նահանգ գաղթած սալմաստեցի և ուրմեցի հայերի այն ընտանիքները, որոնց 1915 թ. գարնան վերջին հաջողվել էր վերադառնալ:

² XIV-XV դդ. հանդիպում է գավառանվան «Սպատկերտ» (նաև՝ «Մըպատկերտ») նախնական ձևը, որից ավելի ուշ հանդես է եկել Սպարկերտը: Տե՛ս «ԺԴ դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Ե., 1950, էջ 541, 573: Հմնտ. «ԺԵ դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն 1 (1401-1450 թթ.), կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Ե., 1955, էջ 301: Ժողովրդական ստուգաբանությունն այս տեղանունը կապում է Սուրբ Բարդուղիմեոս Առաքյալի կողմից գավառ բերված Սուրբ Աստվածածնի հրաշագործ սրբապատկերի հետ՝ «Սուրբ պատկեր» Սպարկերտ (տե՛ս Պետրոս ծ. վարդապետ Կալիօկեցի, Ասիական ճանապարհորդություն ի Հայրենիս, Կ. Պոլիս, 1881, էջ 44): Մեր կարծիքով գավառանունը բխում է վերոհիշյալ գետակի նախնական «Սպատկետ» ձևից, որից հետագայում աստիճանաբար, տեղական բարբառի ազդեցությամբ, «Սպատկետ»-«Սպարտկերտ» անցումով, ի վերջո այն վերածվել է «Սպարկերտի»:

րոսի արևելյան ճյուղավորումների՝ Շատախի կամ Ռշտունյաց լեռներից հարավ ընկած և հիմնականում պատմական Մոկաց աշխարհի տարածքով հոսող Կեցան գետի (Արևելյան Տիգրիսի օժանդակներից) ձախակողմյան Ջոզգետ¹ կամ, օտար հորջորջմամբ՝ «Շաբանու ճամ» վտակի² ձորահովտում: Տեղանքի առանձնահատկություններով պայմանավորված գավառը բաժանվում էր 3 հատվածի՝ Վերին (Ջոզգետի վերին հովիտը), Ներքին (նույն գետի միջնահովիտը՝ ներառյալ Մատաձոր գետակը)³ և Նրզար (գետահովտի ստորին մասը մինչև Կեցանի հունը): Հայաբնակ գյուղերի գերազանց մեծամասնությունը կենտրոնացած էր առաջին 2 մասերում⁴: XVI դ. 1-ին կեսին, օսմանյան տիրապետության հաստատումով Սպարկերտը որպես ժառանգական գավառ (թրք.՝ *ocaklik liva* կամ *sancak*)⁵ ներառվել է Վանի նահանգի կազմում (թրք.՝ *eyâlet*, իսկ 1864-ից՝ *vilâyet*): Սակայն XIX դ. 70-ական թթ. նկատվում է թուրքական իշխանությունների՝ գավառը Վանից տարանջատելու միտումը, ինչը նրանք վերջնականապես ի կատար ածեցին 1878-1879 թթ.՝ Սպարկերտը հանձնելով Բաղեշի (Բիթլիս) նորաստեղծ նահանգին որպես վերջինիս գավառ (թրք.՝ *kaza*): 1880-ական թվականներից հարևան Շենաձորի կամ Շենիձորի, Մամուտանքի, Վերին Կարկառի, Գյավրոնների (Բուն Խիզան) և Խորրոսի հետ Սպարկերտը դարձավ Բաղեշի (Բիթլիս) Կենտրոնական սանջակի կազմում ձևավորված Խիզանի գավառ-կազայի գավառակներից կամ գյու-

¹ Գետանվան այս տարբերակը տարիներ առաջ մեզ անձամբ հաղորդել է ծնունդով սպարկերտցի, պատմական գիտությունների դոկտոր Սերոբ Պողոսի Պողոսյանը (մահ. 1983 թ.):

² Տե՛ս Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Տ. Չիթուհու ֆ., թիվ 2 (ԺՁ տետր), թ. 13:

³ Բարբառային՝ «Վերի Դյուրին» և «Ներքի Դյուրին»: Տե՛ս ԳԱԹ, նույն տեղում: «Դյուրին» («դիւրին») բառն ունի «ձորահովիտ», «կիրճ» իմաստը և հանդիպում էր նաև հարևան Մոկաի հայերի խոսվածքում: Տե՛ս Ծ. Գ. Ի. Ա., *Избранные труды в двух томах*, т. 2, Ереван, 2002, էջ 220:

⁴ Մեր հաշվարկներով Սպարկերտում 1914 թ. եղել է 32 հայաբնակ գյուղ: Տե՛ս Բաղայան Գ., Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրեին: Մաս յոթերորդ: Բիթլիսի նահանգի հարավ-արևելյան գավառները.- «Վեմ», Ե., 2016, թիվ 4 (56), Հավելված, էջ XI-XIV:

⁵ Օտար հորջորջմամբ՝ *Ispayird* կամ *Ispert*: Օսմանյան ցուցակներում հանդիպում է ևս *Esbaberd* աղավաղված ձևով:

ղախմբերից (թրք.՝ nahiyе) մեկը: Այդ կարգավիճակը պահպանվեց մինչև Առաջին աշխարհամարտ:

Ինչպես ցույց են տալիս Սպարկերտ գավառի տեղանունները, մինչև ուշ միջնադար այն գրեթե զուտ հայաբնակ էր: Ի դեպ, չենք բացառում, որ ինչպես հարևան Մոկսում, այստեղ ևս եղել են առանձին մելիքական ընտանիքներ, որոնց մասին, ցավոք, տեղեկություններ չեն պահպանվել: Սակայն հարավից վաչկատուն քրդերի չընդհատվող ներհոսքը, որը մշտապես խրախուսվել է թուրքական պետության կողմից, ծանր հետևանքներ ունեցավ գավառի հայ բնակչության համար: Եկվորների ճնշման ներքո հատկապես XIX դ. 2-րդ կեսից մի ամբողջ շարք բնակավայրեր՝ մասնավորապես Նրզարում, հետզհետե հայաթափվեցին: Այս ժամանակից էլ Սպարկերտից և ընդհանրապես Խիզանի գավառի մյուս գավառակներից, սկիզբ առավ հայ բնակչության զանգվածային արտահոսք՝ հիմնականում ավելի ապահով Բաղեշի նահանգի Մշո, Բուլանուփսի, մասամբ Մանազկերտի գավառներ¹: Ընդ որում այս երևույթը շարունակվեց մինչև Առաջին աշխարհամարտի նախօրյակ: Է՛լ ավելի աղետալի էին 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում տխրահռչակ շեյխ Ջալալեդդինի հրոսակների կատարած վայրագությունների և հատկապես համիդյան կոտորածների հետևանքները: Բավական է նշել, որ միայն 1895-1896 թթ. Սպարկերտի հայ բնակչության զոհերը կազմում էին ավելի քան 350 մարդ, իսկ վերապրածները՝ մահվան սպառնալիքի տակ, նույնիսկ հարկադրված էին ժամանակավորապես իսլամ ընդունել²: Այս իրադարձությունների հետևանքով, ինչ խոսք, Սպարկերտի հայ բնակչու-

¹ Տե՛ս «Բաղեշ եւ իւր շրջակայք».- «Լուսնայ», Տփլիսի, 1900, գիրք Ա, էջ 223-229: Колубакин А. М., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, том 8, часть 2, Тифлис, 1890, стр. 106-114, 120-132. Հմմտ. Պողոս Ծ. վ. Նաթանեան, Արսուր Հայաստանի կամ Տեղեկագիր Բալուայ, Քարբերդու, Չարսանձագի, Ճապաղ Ջուրի եւ Երզնկայու: Յաուելուած ըստ խնդրաց ազգասիրաց. Խիզան գաւառ, Կ. Պոլիս, [1883], էջ 186-191:

² Տե՛ս «Հայաստանեայց եկեղեցիի Տաճկաստանում».- «Արարատ», Սուրբ Էջմիածին, 1896, թիւ 2, էջ 89, 90: «Աղթամարայ հանգուցեալ Խաչատուր կաթողիկոսի վերջին թուղթն եւ տեղեկագիրք».- «Արարատ», 1896, թիւ 5, էջ 245, 246: Հմմտ. «Դրօշակ», Վիեննա, 1896, թիւ 8, էջ 60, թիւ 12, էջ 94:

յան թիվը և տեսակարար կշիռը գավառում զգալիորեն նվազեցին: Ընդ որում ամբողջությամբ կամ հիմնականում հայաթափվեցին Բերդաղ կամ Բերդակ (միջնադարում՝ Բերդավանք), Եղվեճին կամ Եղուճին, Խլենց, Կոան, Հուրորս կամ Արորս, Մեգրե կամ Մզրեն (Հանդի մեգրե), Շիրնից, Սորվավանք, Ստամբոլ կամ Ստամբոլանց գյուղերը և գյուղակ-«թաղերը»: Այնուամենայնիվ, 1914 թ. Աղթամարի թեմի վիճակագրության համաձայն (այսուհետև՝ ԱԹ)՝ Առաջին աշխարհամարտի նախօրեին հայերը դեռ շարունակում էին կազմել Սպարկերտի բնակչության մեծամասնությունը՝ 53.2 % (356 տուն 2770 անձ)¹: Նշված վիճակագրության տվյալներին մենք դեռ կանդրադառնանք: Նշենք միայն, որ մինչև 1915 թ. գարնան վերջը Սպարկերտում իրավիճակն ընդհանուր առմամբ խաղաղ էր, և հայերի զանգվածային կոտորածներ այստեղ տեղ չգտան²: Հիմնական պատճառը, անշուշտ, տեղի մարտական ջոկատների առկայությունն էր (կովոլ ուժը կազմում էր 120-200 մարտիկ)՝ նշանավոր հայդոկ ոզմեցի Լաթոյի (Միհրան Ռաշոյան) ընդհանուր հրամանատարության ներքո: Սա զսպում էր տեղի քրդերին՝ հետ պահելով նրանց հակահայկական գործողություններից: Վանի հերոսամարտի հաղթական ավարտից հետո, օգտվելով հայ կամավորական ջոկատների՝ Վանի նահանգի հարավային գավառներ մուտքից, տեղի ինքնապաշտպանության ղեկավարները Սպարկերտի, ինչպես նաև հարևան գավառակներից ապաստանած հայերին տեղափոխեցին ավելի անվտանգ Մոկս և Գավաշ, որտեղ նրանք մնացին մինչև 1915 թ. հունիսի վերջը³: Վանից ռուսական զորքերի հուլիսյան նահանջը ծանր փորձությունների առաջ կանգնեցրեց նաև կոտորածից

¹ Տե՛ս «Աշխատանք», Վան, 1914, թիւ 22 (168), էջ 7 (1867):

² Բացառություն է կազմում քրդաշատ Նըզարի շրջանը, որտեղ հայերի զգալի մասը կոտորվեց: Այսպես, գրեթե ամբողջությամբ ոչնչացվեց հայաշատ Բաստ գյուղի բնակչությունը: Տե՛ս «Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ (փաստաթղթերի ժողովածու)», հտ. II:Բիթլիսի նահանգ, Ե., 2012, էջ 106: Հմտ. ՆԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 485, թ. 5: Կարծում ենք՝ նույն ճակատագրին են արժանացել նաև հարևան Սորին և Բերդաղը, որոնցից վերապրած ընտանիքների վերաբերյալ մեզ որևէ տվյալ հայտնի չէ (Գ. Բ.):

³ Նույն տեղում, էջ 86, 87, 88-98, 102-107:

փրկված սպարկերտցիներին՝ հարկադրելով նրանց հարևան գավառների հազարավոր հայրենակիցների նման բռնելու գաղթի ճամփան դեպի Արևելյան Հայաստան: Սակայն հակահարձակման անցած օսմանյան բանակի կանոնավոր զորամասերը և քրդական համիդիե հրոսակները փակեցին Բերկրուց հյուսիս ընկած Բանդումահիի կամ Գոնդուրմայի (Դյոնդյուրմեի) կիրճով անցնող գլխավոր ճանապարհը՝ ծանր կորուստներ պատճառելով անկանոն նահանջող Վասպուրականի բազմահազարանոց գաղթականությանը (ավելի քան 10000): Ընդ որում զոհերի հիմնական մասը՝ շուրջ կեսը, բաժին էր հասնում հենց Վանա լճից հարավ գտնվող Սպարկերտ, Մամոտանք, Խիզան (Գյավըռներ), Շենիձոր, Կարկառ, Մոկս, Շատախ, Կարճկան և Գավաշ գավառներից համեմատաբար ուշ տեղաշարժված բնակչությանը: Ավելին, նույն գավառներից տեղահանված շուրջ 20000 մարդ² հարկադրված էր թշնամու կողմից սպանդանոցի վերածված Բանդումահիից շրջվել հարավ, ապա՝ արևելք, և Արճակ-Սարայ-Կոթուր (Կոտուր) ու Խոշաբ-Աղբակ երթուղիներով նորանոր, սարսափելի կորուստներով, ի վերջո, ապաստանել ռուսական բանակի կողմից ռազմակալված Պարսկաստանի Խոյի, Սալմաստի և Ուրմիայի գավառներում (մահալներ): Ստույգ հայտնի է, որ Աղբակի վրայով պարսկական տարածք տեղափոխվածների թիվը կազմում էր 6350-6500 մարդ, որից 843-ը սպարկերտցի էին³: Թե որքան էր Սարայ-Կոթուրի երթուղով անցածների թի-

¹ Տե՛ս «Յուշեր Արմենակ Եկարեանի», խմբագրեց՝ Լ. Աճեմեան, Գահիրե, 1947, էջ 249: Հմմտ. ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 36:

² Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1915, թիւ 173, էջ 1: Кавказский Комитет Всероссийского союза городов. Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении в июле 1915 г. и о мерах, принятых Кавказским Комитетом Союза Городов для борьбы с эпидемией среди них, Тифлис, 1915, стр. 23.

³ Տե՛ս «Հորիզոն», 1915, թիւ 220, էջ 1: Հմմտ. Ա. Մ. Կ. (Ա. մահտեսի Գարապետեան), Սալմաստի հայ գաղթականությունը. «Հորիզոն», Թ., 1916, թիւ 70, էջ 2: Անկարևոր չենք համարում ստորև ներկայացնելու գաղթականների թիվն ըստ մյուս գավառների. Շատախ՝ 1744 անձ, Մոկս՝ 1185 անձ, Կարճկան՝ 694 անձ, Մամոտանք՝ 422 անձ, Կարկառ՝ 305 անձ, Խիզան՝ 365, Գավաշ՝ 131, Խոշաբ՝ 410 անձ, Նորդուգ՝ 83, Աղբակ՝ 76, Բաղեշ՝ 43, Թիմար և Ավաթաշ (Արճակի հյուսիս-արևելքը)՝ 37 անձ, Վան և Հայոց ձոր՝ 8 անձ: Տե՛ս «Հորիզոն», 1916, թիւ 70, ն. տ.:

թիվը, անհայտ է, սակայն վերջիններս տվել էին «հարիրատոր» զոհեր¹: Գաղթականներն անդառնալի կորուստներ կրեցին նաև մոլեգնող տարափոխիկ հիվանդություններից, որոնք կասեցնել հաջողվեց միայն 1915 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Մեզ հասու փաստերը ցույց են տալիս, որ սպարկերտցի փախստականները գրեթե ամբողջությամբ հաստատվել էին Սալմաստի գավառի տարածքում, ընդ որում գերակշիռ մեծամասնությունը՝ Սառնա գյուղում²: Փոքրաթիվ ընտանիքներ էին բնակվում նաև Սալմաստի Մահլամ, Սավրա և Սարամերիկ գյուղերում³: Գրանցված էր ընդամենը 165 տուն (գերդաստան)⁴ 743 անձով⁴: Ինչպես տեսնում ենք, նկատելի է 1915 թ. հաշվառված փախստականների թվի որոշակի նվազում: Ամենից առաջ սա 1916 թ. գարնան և ամռան ամիսներին որոշակի թվով սպարկերտցիների նախ՝ Վանի նահանգ, ապա՝ Արևելյան Հայաստանի տարածք տեղափոխության հետևանքն է⁵: Բացի այդ, չենք բացառում, որ մեզ հասած հաշվառումն ամբողջական չէ, քանի որ մենք տվյալներ ունենք ոչ բոլոր այն բնակավայրերի մասին, որտեղ կային գաղթականներ: Այսպես, ըստ Կովկասյան հայոց բարեգործական ընկերությանը կից Հայկական կենտրոնական կոմիտեի, 1916 թ. հունվարի 14-ի հերթական միօրյա հաշվառման («ցուցակագրութեան») Պարսկաստանի տարածքում գոյություն ուներ գաղթականների 24 «կայան»-բնակավայր⁶: Մինչդեռ, ինչպես տեսանք, մեր տեղեկությունները սահմանափակվում են միայն Սալմաստի 11 գյուղերով: Հետևաբար, հավանականությունը

¹ Նույն տեղում: Հմմտ. Որոտ, Ինչպե՞ս պահպանել երկիրը.- «Հորիզոն», 1917, թիւ 15, էջ 2:

² Միայն Սառնայում հաստատվել էին տեղահանված 24 գյուղերից 22-ի բնակիչները: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 50, ն. տ., թ. 26-31, 34-36:

³ Ն. տ., թ. 51, 60, 64, 67, 71, 74, 75:

⁴ Այս և հետագա հաշվարկները մերն են (Գ. Բ.):

⁵ Այսպես, որոշակի տեղեկություններ կան Սպարկերտի Բազենց (Պազենց), Բազենից վանք (Մուրբ Աստվածածին) և Թաղ (Թաղիկ) գյուղերի 14 տուն բնակիչների (67 անձ) 1916 թ. հուլիսի վերջին Երևանի նահանգ գաղթելու մասին: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 227, գ. 430, ց. 1, թ. 49: Հմմտ. «Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում», էջ 86, 87:

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 31:

մեծ է, որ սպարկերտցիների առանձին խմբերի վերաբերյալ տվյալներն ուղղակի անհայտ են մնացել¹:

Մեզ հասու մի շարք փաստեր ցույց են տալիս, որ, չնայած Բանդումահիի կիրճում ստեղծված դժոխային պայմաններին, վերը նշված հարավային գավառների, այդ թվում՝ և Սպարկերտի, հայերի մի մասին, այնուամենայնիվ, 1915 թ. հուլիսին հաջողվել է Աբաղա-Բայազետ-Իգդիր ճանապարհով անցնել Արևելյան Հայաստան և հաստատվել Երևանի նահանգի տարբեր վայրերում: Դա են ցույց տալիս Շիրինի՝ 1916 թ. արդեն հիշատակված հաշվառման², ինչպես նաև գրեթե նույն ժամանակահատվածում (1916 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին) հայրենի վերին Հյուրուք գյուղի վերաբերյալ ականատեսի՝ սպարկերտցի Ավետիս Ումրոյանի վկայությունները³: Ընդ որում, Սպարկերտից (նաև՝ Խիզանի մյուս գավառակներից) դուրս եկած փոքրաթիվ ընտանիքներ Արևելյան Հայաստան էին տեղափոխվել նաև 1916 թ. հուլիսի վերջին՝ ռուսական զորքերի կողմից ռազմակալված Վանի նահանգի տարածքից, որտեղ նրանք հետ էին դարձել նույն թվականի գարնանը՝ բնօրրան վերադառնալու հույսով⁴: Ընդհանուր առմամբ, Երևանի նահան-

¹ Այսպես, 1917 թ. ամառվա առաջին ամիսներից սկսած, ռուսական իշխանությունների կողմից վերակազմավորված Բայազետի, Խոյի, ինչպես նաև Դիլմանի (Սալմաստ), շրջաններից (округ) Վանի շրջան է վերադարձել ավելի քան 14200 գաղթական (տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, թ. 4, 5): Այնպես որ չի բացառվում, որ վերոհիշյալ վարչամիավորներում ևս ապաստանած լինեին որոշակի թվով սպարկերտցիներ:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 430, թ. 15, 19, 20, 25, 41, 43, 48, 49, նաև՝ 56-59 (ամփոփիչ հանրագումարային ցուցակ): Հմտ. «Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում», էջ 86, 87:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 452, թ. 19, 20: Հմտ. «Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում», էջ 98: Ա. Ումրոյանի տեղեկությունները կարևորվում են հատկապես Սպարկերտի հայ բնակչության ընդհանուր թիվը ճշտելու տեսանկյունից, թեև տարօրինակ կերպով նրա տեղեկագրում բացակայում են հայաբնակ Բաստ, Ներպան և Բերդաղ գյուղերը (Գ. Բ.): Ի դեպ, գավառակի հայ բնակչության վերաբերյալ վիճակագրական տեղեկություններ կան մեկ այլ սպարկերտցու՝ Թորոս Շովհաննիսյանի («Յովհաննեսեան») վկայություններում: Ականատեսը հիշատակել է գավառակի 28 գյուղեր (դարձյալ ոչ լրիվ), որտեղ նրա տվյալներով հայերի թիվը 1915 թ. կազմել է 747 տուն (տե՛ս ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 461, թ. 1: Հմտ. «Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում», էջ 103): Նշենք, սակայն, որ սա խիստ ուռճացված տվյալ է, և մեր հաշվարկներում այն չենք օգտագործել (բացառությամբ առանձին դեպքերի միայն):

⁴ Տե՛ս 29-րդ ծանոթագրությունը: Ի դեպ, սա դարձյալ Վանի ռուսական ռազմական իշխանությունների հակահայ սադրանքի հետևանք էր, որի պատճառով բնօրրան վերադար-

գում ապաստանած սպարկերտցի փախստականները դուրս էին եկել 11 գյուղերից: Մեր ձեռքին եղած փաստաթղթերի տվյալներով պարզվել է, որ նրանց թիվը զգալի էր հատկապես Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի կենտրոն համանուն քաղաքում, ինչպես նաև Քյոսամամադ, Ղուլալի, Ջոլախաչ, Ներքին Գյոզալդարա և Ծակքար գյուղերում: Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք, բավական մանրամասն տվյալներ կան գավառակի Վերին Հյուրուք (Հորուկ) բնակավայրի մասին, որի բնակիչների հիմնական մասն ապաստանել էր նույն նահանգի Ալեքսանդրապոլի գավառի Մելիքգյուղ, իսկ փոքրաթիվ ընտանիքներ՝ Բաշ Ապարան, Բլխեր, Ղազնաֆար և Հաջի-Խալիլ գյուղերում: Սակայն Երևանի նահանգի տվյալները միօրինակ չեն, և դրանց հաշվարկը կապված է որոշակի դժվարությունների հետ: Եթե Շիրինի հաշվառման մեջ մանրամասնորեն գրանցված են թե՛ տները, թե՛ անձերը, և ի հավելումն՝ նաև մարդկային կորուստները, ապա Ա. Ումրոյանը բավարարվում է՝ նշելով միայն Մելիքգյուղում Վերին Հյուրուքից ապաստանած գերդաստանների թիվը՝ 11 տուն, իսկ մյուս 4 գյուղերում տեղավորվածների մասին ընդհանրապես որևէ մանրամասն չի հաղորդում: Ենթադրելի է, որ ամեն գյուղում ցրված ապրել է 1-ական տուն բնակիչ: Հետևաբար կարծում ենք, որ նշված բնակավայրից Ապարանի գավառամասում հաշվառված գերդաստանների թիվը հասնում էր

ձած ավելի քան 35000 հայերից շուրջ 25000-ը ստիպված էր երկրորդ անգամ գաղթել: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 112, թ. 1-3: Ավելի մանրամասն տե՛ս Սահակյան Ռ. Օ., Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս-1917 թ. փետրվար), Ե., 2015, էջ 277-279:

¹ Նոր Բայազետն այժմ ՀՀ Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառն է: Մյուս գյուղերը ևս մտնում են նույն մարզի մեջ (նախկինում եղել են ՀԽՍՀ Կամոյի և Մարտունու շրջաններում): Ներկայացնում ենք դրանց ժամանակակից անուններն ըստ վերոնշյալ հերթակալության՝ Քյոսամամադ-Գանձակ, Ղուլալի-Կարմիր գյուղ, Ջոլախաչ-Ջոլաքար, Ն. Գյոզալդարա-Վարդենիկ: Միայն Ծակքարն է պահել նախկին (ի դեպ, պատմական) անվանումը :
² Հիշատակվող բնակավայրերն այժմ գտնվում են ՀՀ Արագածոտնի մարզի կազմում (նախկինում՝ ՆԽՍՀ Ապարանի և Արագածի շրջաններում): Ներկայացնում ենք նաև դրանց ժամանակակից անվանումներն ըստ վերոնշյալ հերթականության՝ Մելիքգյուղ-նույնը, Բաշ Ապարան՝ Ապարան քաղաք, Բլխեր՝ Շենավան, Ղազնաֆար՝ Արագած, Հաջի Խալիլ՝ Օտղակահովիտ:

15-ի¹: Այսպիսով, Երևանի նահանգի տարբեր վայրերում գրանցված մեզ հայտնի գերդաստան-տների թիվը որոշակի վերապահումով, գերազանցում էր 70-ը, որոնցից սակայն ամբողջական տվյալներ կան 61-ի մասին, որտեղ 1916 թ. ապրում էր 308 մարդ: Ամփոփենք: Մեզ հաջողվել է 1916-1917 թթ. կազմված գաղթականների հաշվառումների հիման վրա վիճակագրական տվյալներ հավաքել Սպարկերտի 27 գյուղերի (1914 թ.՝ 32-ից)² 226 տուն-գերդաստանների վերաբերյալ, որտեղ գաղթի և կոտորածների հետևանքով մնացել էր 1051 բնակիչ: Իհարկե, սպարկերտցի գաղթականների թիվն իրականում ավելին էր՝ 241 տուն, որը դարձյալ ամբողջը չի կարող լինել (ԱԹ՝ 356 տուն, Ա. Ումրոյան՝ 370 տուն)³: Այդուհանդերձ, ինչպես նշել ենք հոդվածի սկզբում, նման պարագայում անգամ մեզ հասու վիճակագրական տվյալները հնարավորություն են ընձեռում բավական ճշգրիտ պատկերացում կազմելու Սպարկերտի հայ բնակչության թվի և տեսակարար կշռի մասին: Գործին նպաստում է այն հանգամանքը, որ ցուցակներում պարտադիր նշված են մարդկային կորուստներն ըստ առանձին տուն-գերդաստանների (տե՛ս վերևում): Հարկ է նշել, որ հաշվառումների ցուցանիշները խիստ անհավասարաչափ են բաշխված: Ստորև ներկայացված «Այուսակ 1»-ում խմբավորել ենք 19 բնակավայր (ընդհանուրի շուրջ 60 %-ը), որոնք գաղթականների ցուցակներում ներկայացված են ամբողջապես կամ մեծամասամբ (ԱԹ-ի և Ա. Ումրոյանի տվյալների համադրությամբ գրանցված տուն-գերդաստանները կազմում են առնվազն կեսը):

¹ Շիրինի տվյալներով՝ նույն Վերին Հյուրուբից Նոր Բայազետի Քյոսամանաղ գյուղում գրանցվել էր 8 տուն (34 անձ՝ նախկին 66-ի փոխարեն): Տե՛ս ՀԱԱ, ֆ. 227, գ. 430, թ. 48: Ընդ որում ամփոփիչ հանրագումարային ցուցակում գյուղի տվյալներն աղճատվել են՝ 5 տուն 29 անձ (կորստի հաշվարկով նախկին բնակչության թիվը, սակայն, նույնն է): Ն. տ., թ. 56:

² Դրանցից 16-ի բնակիչները (Առնջիկ, Բաղրանց կամ Բաղրանանց, Բաստ, Դաշտ, Դավաբու, Խուրթ, Վ. Կոտենց, Հողանդ, Ձմեն, Մատ, Ներպան, Ն. Հյուրուբ, Սուրբ Գևորգ կամ Շիրինից վանք, Սուգանց, Տանձիս, Տվաղուս) գրանցվել էին միայն Մավմաստում, 3-ինը (Բազենից վանք, Ն. Կոտենց և Ճածվան)՝ Նոր Բայազետում, իսկ մյուս 8 գյուղերի (Բազենց կամ Պազենց, Լվար, Հայ Հուսպ, Կեղիս կամ Գեղիս, Վ. Հյուրուբ, Սևբար, Տոսու) բնակիչները ցրված էին 2 գավառներով:

³ Ա. Ումրոյանի վիճակագրությունը տե՛ս ՀԱԱ, ֆ. 227, գ. 1, գ. 452, թ. 19, 20:

Աղյուսակ 1

##	ԲՆԱԿԱՎԱՅՐ	1915 թ.				Իրական թիվը (ԻԹ, բն.)
		Աղթամարի թեմ		Գաղթական. ցուցակներ		
		տուն	բնակ.	տուն	բնակ.	
1	Անչիկ	6	24	3	18	40
2	Բաղրանանց (Բաղրանց)	7	45	10	52	55/60
3	Բազենց (Պազենց)	21	135	12	105	185
4	Դալարս	13	67	11	121	140/145
5	Դաշտ	6	50	10	67	70
6	Թաղ (Թաղիկ)	4	24	5	37	40
7	Լվար (Լվար)	10	105	9	89	105
8	Խուբ (Խոյիդ)	7	50	10	61	60
9	Կեղիս (Գեղիս)	9	94	14	99	100
10	Կոտենց (Կոտենց, Կոտնից), Ներքին	10	79	9	90	90/100
11	Հողանդ	10	108	13	195	200
12	Հուսպ (Հայ Հուսպ, Վերին Հուսպ)	5	37	7	52	50/55
13	Հյուրուք (Հորուկ), Ներքին	8	84	16	111	110/115
14	Ձմեն (Մատածմեն)	7	50	7	80	80
15	Մատ	10	96	7	107	150
16	Սուգանց (Սոգանց)	10	56	10	63	65/70
17	Տանձիս (Տանձիկ)	3	16	2	20	30
18	Տոսու	17	105	10	80	140
19	Տվաղուս	9	98	17	120	120
ԸՆԴԱՄԵՆԸ		172	1323	182	1567	1750/1775

Աղյուսակի տվյալները պարզորոշ ցույց են տալիս, որ մեր կողմից առանձնացված խմբաքանակի բնակավայրերում բնակիչների թիվն իրականում գերազանցել է 1914 թ. ԱԹ-ի ցուցանիշներն ինչպես ըստ տների (+5.8 %), այնպես էլ՝ ըստ անձերի (+18.4 %): Ընդ որում, 9 գյուղերի պարագայում (Բաղրանանց, Դաշտ, Թաղ, Խուբ, Կեղիս,

Հողանդ, Հուսպ, Ն. Հյուրուք, Տվաղուս) ԱԹ-ի ցուցանիշները միայն ըստ տների թերհաշվառված են 56.9 %-ով (sic!): Ճիշտ է, Դալարս, Ն. Կոտենց, Մատ և Տանձիս գյուղերի տների քանակն ըստ ԱԹ-ի գերազանցում է գաղթականների հաշվառման տվյալները (24.1 %-ով), սակայն ըստ անձերի՝ ընդհակառակը, զգալիորեն զիջում է (31 %-ով): Ուշագրավ է, որ 3 բնակավայրերի դեպքում (Մատ, Ձմեն, Սուզանց) տների թիվը համընկնում է: Վստահորեն չենք կարող ասել՝ պատահականությո՞ւն է դա, թե՞ ոչ: Սակայն նույնիսկ այս պարագայում կրկին ակնառու են գաղթականների հաշվառումներում բնակիչների գրեթե քառորդով (23.8 %) բարձր ցուցանիշները: Առանձնացված գյուղերից միայն 4-ի դեպքում է (Առնջիկ, Բազենց, Լվար, Տոսու) նկատելի ԱԹ-ի վիճակագրական տվյալների բացահայտ առավելությունը: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ, ինչպես արդեն նշել ենք, գաղթականների մի մասի՝ 1916 և 1917 թթ. հաշվառման ցուցանիշներն ամբողջական չեն: Այնուամենայնիվ, դրանք ևս օգնել են՝ կատարելու ճշգրտող հաշվարկներ: Ամբողջ հարցն այն է, որ գաղթականների հաշվառումները նաև լիովի հնարավորություն են ընձեռում որոշելու Սպարկերտի հայերի **տան մեծության միջին գործակիցը (տմմգ)**, որը կազմում է **8.6** մարդ¹: Դա թույլ է տվել **տների առավելագույն թիվ (տաթ) x տմմգ** սկզբունքի կիրառումով որոշել բնակիչների **իրական թիվը (իթ)** Մեծ եղեռնի նախօրեին: Ըստ այդմ, քննարկվող 19 գյուղերում 1915 թ. հայերի **իթ-ը** տատանվել է 1750-1775-ի միջև: Սա արդեն 1/3-ով (32.3 % - 34.2 %, միջինը՝ 33.25 %) գերազանցում է ԱԹ-ի տվյալները:

Կցանկանայինք անդրադառնալ Սպարկերտի ևս 5 գյուղերի, որոնց վերաբերյալ 1916-1917 թթ. հաշվառումներում հանդիպող տվյալներն ամբողջական չեն՝ կազմելով ԱԹ-ի տների թվի ընդամենը 26.5

¹ Ի դեպ, սա բավական պայմանական ցուցիչ է, քանի որ «Աղյուսակ 1»-ի տվյալներից պարզորոշ երևում է, որ Սպարկերտի բազմաթիվ գյուղերում այն զգալիորեն բարձր էր: Օրինակ՝ Հողանդում տմմգ-ը կազմում է 15 մարդ, Ձմենում՝ 11.4, Դալարսում՝ 11, Ն. Կոտենցում և Տանձիսում՝ 10, Լվարում՝ 9.9, Բազենցում՝ 8.75: Հմնտ. նաև «Աղյուսակ 2»:

%-ը: Ընդ որում, դրանց շարքում են գավառակի առավել բազմամարդ և միևնույն ժամանակ հայաշատ բնակավայրերը (տե՛ս «Աղյուսակ 2»): Այնուամենայնիվ, անգամ թերի դրանք զգալիորեն օգնում են կատարելու համապատասխան սրբագրումներ վերոհիշյալ բնակավայրերի վիճակագրության հարցում: Ինչպես երևում է «Աղյուսակ 2»-ից, այս խմբաքանակի գյուղերի **տմնգ**-ը դարձյալ գերազանցում է գավառակի՝ մեր կողմից ստացված ընդհանուր ցուցիչը՝ կազմելով 9.9 մարդ: Այս պարագայում նշված գյուղերի բնակչության թիվը պետք է կազմեր շուրջ 1435 մարդ, ինչը 29.2 %-ով գերազանցում է ԱԹ-ի վիճակագրական տվյալները: Ինչպես տեսնում ենք, 2 դեպքում էլ թերհաշվառման ցուցանիշները բավական մոտ են՝ 33.25 և 29.2 %, իսկ միջինը կազմում է 31.2 %¹: Ըստ այդմ, 2 ցուցանիշների միջին հաշվարկով կարելի է եզրակացնել, որ քննարկվող բնակավայրերում Մեծ եղեռնի նախօրեին հայերի **իթ**-ը գրեթե քառորդով՝ 24.7 %-ով, բարձր է եղել՝ կազմելով շուրջ 1340 մարդ: Փաստորեն մեր հաշվարկներով վերոհիշյալ 2 խմբաքանակների 24 գյուղերում հայերի **իթ**-ը եղեռնի նախօրեին եղել է 3100 և ավելի բնակիչ, ինչը 15.5 %-ով գերազանցում է Սպարկերտի ընդհանուր հաշվարկային ցուցանիշն ըստ ԱԹ-ի վիճակագրության:

Աղյուսակ 2

